

սարակաց յոյսն արծարծեցաւ՝ թէ այսպէս ճշմարտութիւնը առաւելագոյն եւ խորագոյն չափով պիտի ծանօթացուի: Քրիստոնէական բարքերը պիտի վերանորոգուին կենսաւետ աճումով: պիտի վերահաստատուի միութիւնը, համերաշխութիւնը եւ խաղաղութիւնը:

Ահա այս երեքը — ճշմարտութիւն, միութիւն, խաղաղութիւն — նիւթ պիտի ըլլան Մեր այս անդրանիկ Կոնգրէսին, զոր կ'ուղղենք ամբողջ կաթողիկէ աշխարհի. ճշմարտութիւն, միութիւն եւ խաղաղութիւն՝ զորս պէտք է հետապնդել եւ աճեցնել սիրոյ հոգիով: Ու կը կարծենք թէ այս է որ կը պահանջէ Մեզմէ առաքելական պաշտօնը, զոր ստանձնած ենք: Թող Ս. Հոգւոյն լոյսը երկնքէն ճառագայթէ Մեր վրայ՝ մինչ քան զքեզ, ինչպէս նաեւ ձեր վրայ՝ մինչ քան զկարգաւ. եւ ամէնքը՝ հլու աստուածային շնորհքին, վարենան հասնիլ այն նպատակին՝ որուն կը տեսնան, թէ պէտք նախապաշարումներ եւ բազմապիսի դժուարութիւններ խոչընդոտ կը կանգնին:

Ա.

Ճ Շ Մ Ա Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Պատճառն ու արմատը այն բոլոր չարիքներուն որ կը թունաւորեն անհատները, ազգերն ու ցեղերը, եւ շատերու հոգիները կը վրդովեն՝ ա'յս է. ճշմարտութեան անգիտութիւնը. ու ոչ միայն անգիտութիւնը, այլ նաեւ ճշմարտութեան հանդէպ արհամարհանքը եւ յախուռն մեկուսացումը անկէ: Ասկէ է որ կը ծագին ամէն տեսակ մոլորութիւններ, որոնք ժանտախտի նման կը վարակեն հոգիները, կը թափանցեն ընկերային խաւերու մէջ, կը յեղաշրջեն ամէն ինչ՝ մեծապէս միասնելով անհատներուն եւ ընկերութեան: Բայց Աստուած մեղի բանականութիւն տուած է, որով կարող ենք ճանչնալ բնական ճշմարտութիւնները: Եթէ հետեւինք՝ ուրեմն՝ բանականութեան, հետեւած կ'ըլլանք նոյն ինքն Աստուծոյ, որ հեղինակն է անոր ու միաժամանակ առաջնորդ եւ օրէնսդիր մեր կեանքին. իսկ եթէ, կա՛մ տղիտարար, կա՛մ ծուլութեամբ, կա՛մ՝ չար եւս, չարամտօրէն շեղինք անկէ, նովին իսկ զործով՝ կը հեռանանք գերագոյն բարիքէն եւ բարոյական օրէնքէն: Թէեւ, ինչպէս ըսինք, կարող ենք լոկ բանականութեամբ հասնիլ ընդհանրական ճշմարտութիւններուն, սակայն այս ծանօթութիւնը — գլխաւորաբար կրօնքի եւ բարոյականի հարցերուն մէջ — շատեր չեն կարող ձեռք ձգել, եւ եթէ անքան ձեռք ձգեն՝ ատիկա տակաւին գերծ չէ սխալներէ: Իսկ այն ճշմարտութիւնները որոնք գերազանցօրէն վեր են բանականութեան կարողութեան բնական սահմանէն, զանոնք ոչ մէկ կերպով չենք կրնար ճանչնալ՝ առանց գերբնական լոյսի մը օժանդակութեան: Ասոր համար է որ Բանն Աստուծոյ « բնակեալ ի լոյս անմատոյց » (Ա. Տիմ. 2, 16) անսահման ողորմութեամբ գթալով մարդկային ազգին՝ « մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ » (Յովհ. Ա., 14), որպէսզի լուսաւորէ « զամենայն մարդ որ գալոց է յայտարհ » (Յովհ. Ա., 9), եւ առաջնորդէ զամէնքը ոչ միայն կատարեալ ու անթերի ճշմարտութեան, այլ նաեւ առաքինութեան եւ յաւիտենական երանութեան: Հետեւեալներէնք պարտական են ընդունել:

լու Աւետարանական վարդապետութիւնը, զոր եթէ մերժեն՝ կը վտանգուին հիմերն ինքնին ճշմարտութեան, պարկեշտութեան եւ քաղաքակրթութեան:

ԱՒԵՏԱՐԱՆԻ ԿԵՆՍԱՏՈՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս յայտնի է, ծանր հարց մըն է այս, որուն հետ սերտօրէն կապուած է մեր յաւիտենական փրկութիւնը: Անոնք որ հեթանոսներու Առաքեալին ըսածին նման « յամենայն ժամ ուսանին եւ երբեք ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանեն » (Բ. Տիմ. 2, 15), եւ կ'ուրանան մարդկային բանականութեան կարողութիւնը՝ ամէն ստոյգ ճշմարտութիւն ըմբռնելու, եւ կը մերժեն նոյն իսկ Աստուծոյ կողմէ յայտնուած ճշմարտութիւնները՝ որ հարկաւոր են մեր յաւիտենական փրկութեան համար, անոնք բոլորովին հեռու են Քրիստոսի վարդապետութենէն, ու նաեւ մտածելափոխէն հեթանոսներու Առաքեալին՝ որ կը յորդորէ « հասցուք ամենեքեան ի մի միաբանութիւն հաւատոց եւ գիտութեան Որդւոյն Աստուծոյ... զի մի՛ յայսմ հետէ իցեմք տղայք խոռովեալք եւ տատանեալք յամենայն հոգմոց վարդապետութեան, խաբէութեամբ մարդկան, խորամանկութեամբ ի խաբէութիւն մոլորութեան. այլ ճշմարտեալք սիրով՝ աճեցուցուք ի նա զամենայն, որ է գլուխ Քրիստոս. ուստի ամենայն մարմինն յօգեալ եւ պատշաճեալ ամենայն խաղալիք տարաբերութեան՝ ըստ ազգեցութեան՝ չափով ըստ իւրաքանչիւր մասին՝ զաճումն մարմնոյ զործէ՝ ի շինած անձին իւրոյ սիրով » (Եփես. 4, 13-16):

ՄԱՄՈՒԼԻ ՊԱՐՏՔԸ Ի ՆՊԱՍՏ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Իսկ անոնք որ գիտակցաբար կամ յանդիմարտէն կը մաքառին յայտնի ճշմարտութեան դէմ, եւ խօսքով ու գրչով կամ գործով ստուգեան դէնքեր կը դործածեն՝ սիրաշահելու համար պարզունակ ժողովուրդը, եւ կերպաձեւելու՝ ըստ իրենց կամքին՝ երիտասարդներու միամիտ ու մոմի նման կապուղ հոգիները, անոնք անտարակոյս կը ղեղձանին ուրիշներու անգիտութեամբ եւ անմեղութեամբ, ու բոլորովին դատապարտելի արարք մըն է որ կը գործեն:

Հետեւաբար անհրաժեշտ կը նկատենք այստեղ յորդորել որ ուշի ուշով ճշմարտութիւնը ներկայացնեն, զգուշաւոր վիճակով ստուգութեամբ եւ խոհմտութեամբ, մասնաւորապէս բոլոր անոնք՝ որ զրքերով, թերթերով ու լրագիրներով — որոնցմով լեցուն է աշխարհ — հակայ ազգեցութիւն մը ունին ընթերցողներու հոգւոյն վրայ, երիտասարդներու մանաւանդ, եւ անոնց կարծիքներու եւ բարքերու կազմաւորման մէջ: Ծանր պարտականութիւն ունին անոնք չճաւալելու սուտն ու կեղծիքը, անձիւտն ու անբարոն. այլ միայն ճշմարիտը, եւ մանաւանդ այն, որ՝ ոչ թէ անտեւրու, այլ ուղղամտութեան եւ առաքինութեան կ'առաջնորդէ:

Անսահման տխրութեամբ կը նկատենք, ինչ որ Մեր Երջանկայիշատակ Նախորդը Լեւոն ԺԳ. կը դատապարտէր ըսելով թէ « սուտը խելայեղօրէն կը սողոսկի... հաստափոր հատորներով եւ փոքրիկ գրքոյկներով, լրագիրներով թողուցիկ էջերով եւ թատերական լպիրշ ներկայացումներու միջոցով »¹. անգին « Վը նշմարենք զրքեր եւ թերթեր՝ որոնք կը տպուին հեղինակ համար առաքինութիւնը, ծուարելու համար ախտերը »²:



ՀԱՄԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԾԱԽԱՂԱՂ ԱՐԴԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Աստուծոյ վրայ, այսօր, հարկ է աւելցնել, ինչպէս լաւ գիտէք — Մեծարդոյ Եղբայրներ եւ սիրելի որդեակներ — ձայնաւորութիւնը, շարժապատկերը, հեռա-տեսիլը, որոնց ներկայացումներուն տունէն իսկ կարելի է հանդիսատես ըլ-լալ. ու թէեւ ասոնց միջոցով ալ կարելի է պարկեշտ ու բարի նպատակներ հետապնդել եւ քրիստոնէական կեանքը հրահրել, բայց դժբախտաբար, ու մանաւանդ երիտասարդներու մօտ, անոնք յաճախ կը ծառայեն զրգոյնքով ան-բարոյ զգացումներ, անպարկեշտ ապրումներ, առաջնորդելով կեղծոգայտիւր բարբառներու եւ ախտաւոր կեանքի:

Այս ազդեցութիւնը գէշն էր զէմ՝ հարկ է կուրել ճշմարտութեան եւ ար-դարութեան գէշներով, որպէսզի այս հսկայ չարիքին՝ որ օրէ օր աւելի եւս կը ծաւալի՝ թափն ու յորձանքը կարելի ըլլայ ազդու կերպով կասեցնել: Չար եւ սուտակապա մամուլին հարկ է դիմադրանք՝ ուղիղ եւ անկեղծ տպագրու-թիւններով. ձայնաւորութիւնը հազորդութիւններուն եւ կամ շարժապատկերի եւ հե-ռատեսիլի ներկայացումներուն գէշ՝ որոնք դարձած են միջոցներ ապակա-նութեան եւ մոլորութեան՝ հարկ է այնպիսի հնարքներով պայքարել, որ ճշ-մարտութիւնը ջատագովուի եւ պաշտպանուի բարքերու անարատութիւնը. եւ այսպէս՝ այս նոր գիւտերը, որոնք դժբախտաբար այնքան ազդու են ի սպաս չարին, դառնան մարդու համար բարեբար եւ օգտաւատ ազդակներ, եւ մնա-լով միաժամանակ պարկեշտ դրօսանքի առիթ՝ դարձան ըլլան այն թոյնին, որ նոյն ազդուրէն կը բղխի յաճախ:

ԳՐՕՆԱԿԱՆ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Ու տակաւին չեն պակսիր անոնք՝ որ թէեւ գիտակցաբար չեն հակառակիւր ճշմարտութեան, սակայն անհոգութիւն եւ ծայրայեղ անտարբերութիւն մը ցոյց կու տան անոր հանդէպ, վարժէք թէ Աստուած մեզի բանականութիւն տուած չըլլար՝ որոնելու եւ գտնելու համար ճշմարտութիւնը: Դատապար-տելի այս գործելակերպը հուսկ իւրայատուկ յեղաշրջումով կ'առաջնորդէ այն անհեթեթ եղբայրացութեան՝ թէ բոլոր կրօնքները համազօր են, առանց ճշ-մարտի ու սուտը իրարմէ զանազանելու: Այս սկզբունքը — նոյն Մեր Նախոր-դին բառերով — «անսխալօրէն կ'առաջնորդէ մերժելու բոլոր կրօնքները, մանաւանդ կաթողիկէ կրօնքը, որ բոլորին մէջէն միակ ճշմարտի ըլլալով՝ չի կրնար միանալուն հետ հաւասար դաշտի վրայ դասուիլ անպարսաւ »³: Մերժել որեւէ զանազանութիւն այնքան հակասական բաներու միջեւ, կրնայ հուսկ առաջնորդել ազդեցութիւն այն եղբայրացութեան՝ որ կը մերժէ ամէն կրօնք, թէ՛ գործնականապէս եւ թէ՛ տեսականօրէն:

Ի՞նչպէս կրնայ Աստուած, որ էութեամբ ճշմարտութիւն է, վաւերացնել կամ թոյլատրել անտարբերութիւնը, անհոգութիւնը եւ անգիտութիւնը ա-նոնց, որ՝ երբ հարցը կը դրուի ամէնուս յաւիտեանական փրկութեան համար անհրաժեշտ նիւթի մը շուրջ՝ բնաւ փոյթ ցոյց չեն տար եւ ոչ ալ կը հետա-քրքրուին կարեւոր ճշմարտութիւններ փնտռելու եւ գտնելու, եւ հուսկ Աստու-ծոյ մատուցանելու արդար եւ իրաւացի պաշտամունքը:

Ո՛րքան աշխատանք կը թափուի եւ ո՛րքան ջանք՝ մարդկային գիտելիք-ներու յառաջադիմութեան ի սէր: Եւ մեր դարաշրջանը արդարեւ կրնայ պար-

ծիլ այն հրաշալի յաղթանակներուն ի տես՝ որոնց տիրացած է գիտական հետախուզումներով. բայց ինչո՞ւ միեւնոյն ճիշդ պիտի չթափուի, մանա-ւանդ թէ աւելի եւս, ապահովապէս ստանալու համար այն գիտութիւնը՝ որ չի պատկանիր այս երկրաւոր ու վաղանցուկ կեանքին, այլ երկնաւորին՝ որ վերջ պիտի չունենայ: Ու երբ հասու ըլլանք այն ճշմարտութեան, որ Աւե-տարանէն կը բղխի, եւ որ պէտք է արտացոլայ մեր գործնական կեանքին մէջ, ա՛յն ատեն միայն մեր հոգին պիտի վայելէ անդորր երանութիւնը խաղաղու-թեան եւ սիրոյ. հրճուանք մը, արդարեւ անհունօրէն գերազանց անկէ՝ որ կրնայ ծագիլ գիտական նորոյթներէն եւ այժմեան զմայլելի գիւտերէն, որոնք արդարացիօրէն ամէն օր կը փառաբանուին, մինչեւ երկինք կը բարձրացուին:

Բ.

ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹԻՒՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՐԱՐՈՒԹԵՆԸ ԿԸ ԾՆԻ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

Ճշմարտութեան այսօրինակ ծանօթութենէն, որ պէտք է ըլլայ լրիւ, ան-թերի ու պայծառ, պիտի ծագի ու բղխի միութիւնը մտքերու, հոգիներու եւ գործունէութեան: Արդարեւ ամէն հակառակութիւն, անհամաձայնութիւն կամ տարակարծութիւն իր հիմնական պատճառն ունի անոր մէջ՝ որ ճշմարտու-թիւնը կա՛մ չէ ճանչցուած, կա՛մ՝ չար եւս, թէպէտ ուսումնասիրուած ու ճանչցուած, բայց մերժուած է՝ ի տես այն օգտաւատ գիւտութիւններուն, որոնց կը յաւակնին մարդիկ տիրանալ թիւր կարծիքներով, եւ պախարակելի կուրութեամբ մը կը մղուին ներողամտօրէն արդարացնելու իրենց ախտերն ու յոռի գործերը:

Հարկ է, ուրեմն, որ ամէնքը, ըլլայ անհատ քաղաքացիներ, ըլլայ անոնք որ իրենց բուռն մէջ ունին ազդերու ճակատագիրը, անկեղծօրէն սիրեն ճշմարտութիւնը, եթէ կ'ուզեն վայելել այն համերաշխութիւնն ու այն խա-ղաղութիւնը, որոնցմէ միայն կրնայ բղխիլ հասարակաց եւ անհատական խ-կական բարօրութիւնը:

Յատկապէս այս համերաշխութեան եւ խաղաղութեան կը յորդորենք Ազգերու Գերագոյն Պետերը: Տէրութիւններու միջեւ զոյացած տարակարծու-թիւններէն վեր ու անկախ, Մենք, որ հաւասար խանդաղատանքով կը սիրենք բոլոր ժողովուրդները, եւ չենք առաջնորդուիլ երկրաւոր շահերէ, ոչ քաղա-քական աշխարհակալ ձկտումներէ, եւ ոչ ներկայ կեանքի ցանկութիւններէն, կը համարինք որ Մեր ձայնը՝ այսպիսի կենսական խնդրի մը մասին խօսելու պահուն՝ հաստատապէս լսելի պիտի ըլլայ ու զնահատուի ամէնքէն, ինչ ազդի ալ պատկանին անոնք:

ՄԱՐԴՈՅ ՀԱՄԵՐԱՅՐՈՒԹԻՒՆԸ

Աստուած ստեղծեց մարդիկը ո՛չ իրարու թշնամի, այլ եղբայր. երկիրը տուաւ անոնց, աշխատանքով ու խոնջկնքով մշակելու համար, որպէսզի ա-մէնքը ըմբռնեն անոր պտուղները եւ հայթայթեն անկէ կարեւորը՝ կեանքի

պահպանութեան եւ աճումին ի նպաստ: Չանաղան աղբերը ուրիշ բան չեն, բայց եթէ մարդերու, այսինքն՝ եղբայրներու ընկերակցութիւններ, որոնք պէտք է ձկտին եղբայրական համամիտութեամբ ո՛չ միայն իւրաքանչիւր անհատի սեփական նպատակին, այլ նաեւ հանուր մարդկային ընկերութեան հասարակաց բարիքին:

Մահկանացու այս կեանքի ընթացքը, միւս կողմէ, ինքնիր մէջ նկատելի իրականութիւն մը չէ միայն՝ հաճոյապաշտ նպատակի մը համար ստեղծուած. մարդկային մարմինը ապականութեան չէ որ վառաջնորդէ լոկ, այլ նաեւ անմահական կեանքին, յաւիտենական հայրենիքին: Եթէ այս ուսուցումը, այս միտքարական յոյսը ջնջենք մարդոց մտքէն, այն ատեն կեանքի բովանդակ իմաստն ալ կը տապալի. ճակատադրականօրէն հոգիներու մէջ կը բորբոքի ցանկութիւնը, վրիւն ու հակառակութիւնը, զոր ոչ մէկ սանձ պիտի կարենայ ազդու կերպով դադարեցնել. ալ պիտի չծաղկի խաղաղութեան ձիթենին, այլ պիտի բռնկի երկպառակութեան բոցը. մարդուս ճակատադրը պիտի հաւասարի դադաններու ճակատադրին, որոնք զուրկ են իմացականութենէ. մահաւանդ թէ, ինչ որ վատադոյնն է, չարաչար դործածելով իմացականութիւնը՝ մարդս կարող է վահալիթիլ չարութեան անդունդներուն խորը, ինչ որ դժբախտաբար յաճախ կը պատահի, եւ հասնիլ մինչեւ անդամ՝ կայէնի նման՝ եղբայրական արիւնով եւ ոճիրներով պղծելու երկիրը:

Հարկ է, ուրեմն, ամէնէն առաջ, ուղիղ սկզբունքներու առաջնորդել մտքերը եւ հոգիները, եթէ կ'ուզենք որ մեր գործերն ալ արդարութեան հունին մէջ մտնեն. եւ պէտք է որ ուզենք:

Ինչո՞ւ համար, եթէ եղբայրներ կը կոչուինք եւ ենք իսկ, եւ հասարակաց բարիքներու մասնակից ենք թէ՛ այս եւ թէ՛ հանդերձեալ կեանքին մէջ, ինչո՞ւ, կը կռկենք, ուրիշները մեզի թշնամի եւ հակառակորդ պիտի նկատենք. ինչո՞ւ պիտի նախանձինք ուրիշներուն, ինչո՞ւ ատելութիւն պիտի զրդուենք եւ մահացու զէնքերով մեր եղբայրներուն դէմ պիտի կանգնինք: Ո՛հ, բաւական շատ կուտած են մարդիկ իրարու դէմ. շատ է թիւը այն անբարեկամներուն, որոնք իրենց ծաղիկ հասակին մէջ թափած են իրենց արիւնը. անթիւ են պատերազմէն ինկողներու շիրիմները, որոնք խիստ ու խորհրդաւոր ծայրով մը կը յորդորեն մեզ՝ որ ի վերջոյ յանդինք համերաշխութեան, միութեան եւ անդորր խաղաղութեան:

Թող ամէնքը, ուրեմն, դիմեն՝ ո՛չ անոր որ հոգիները իրարմէ կը տարանջատէ, այլ անոր՝ որ կրնայ զանոնք զօդել փոխադարձ իրարհասկացողութեամբ եւ երկակողմանի յարգալիբ վերաբերումով:

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ՝ ԱԶԳԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Եթէ մարդիկ խաղաղութեան հետամուտ ըլլան, ինչ որ պարտականութիւն մըն է, եւ ոչ թէ պատերազմի, եթէ ամէնքը միահամուռ ձիգերով անկեղծօրէն նկրտին ժողովուրդներու եղբայրական համերաշխութեան, այո՛, ա՛յն ատեն միայն կարելի պիտի ըլլայ ներդաշնակօրէն նկատել հասարակաց շահերը եւ նպատաւոր կերպով համաձուլել բոլոր տարածայնութիւնները. եւ այսու հնարաւոր պիտի դառնայ՝ փոխադարձ համերաշխ խորհրդակցութիւններով՝ ցանկալի միութեան առաջնորդել մարդկային տիեզերական ընտանիքը, ուր իւրաքանչիւր ազգ պիտի վայելէ իր սեփական ազատութեան իրաւունքը՝ բոլորովին ապահով ու երջանիկ, առանց ոտնակոխ ըլլալու ուրիշներէ:

Անոնք որ կը հարստահարեն ուրիշները եւ կը զրկեն զանոնք իրենց արդար անկախութենէն, անոնք այս միութեան նպատակ մը չեն կրնար բերել անտարաւիտոյս: Այստեղ կը պատշաճի միեւնոյն մեր իմաստուն Նախորդին Լեւոն ԺԳ-ի պատգամը. թէ « Սանձելու համար փառասիրութիւնը, ուրիշի ինչքերուն տիրանալու ցանկութիւնը, նախանձը, որոնք հզօր զրգիւններ են պատերազմի, քրիստոնէական առաքինութիւններէն ամէնէն ազդուն՝ արդարութիւնն է »⁴:

Իսկ եթէ աղբերը չկարենան հասնիլ այս եղբայրական միութեան, որ անհրաժեշտօրէն հիմնուած է արդարութեան վրայ եւ եղբայրսիրութենէն կը ստանայ իր անունը, աշխարհի կացութիւնը ծանր վտանգի մէջ կը մնայ: Ասոր համար է որ բոլոր իմաստուն մարդիկ վրդոված՝ միշտ կ'աւաղեն այս անխտոյզ վիճակը, որ տարակոյսի տակ կը թողու՝ թէ արդեօք ձկտում մը կա՞յ դէպի իսկական եւ հաստատուն խաղաղութիւն, թէ աշխարհ ծայրայեղ կուրութեամբ կ'ընթանայ դէպի նոր ու զարհուրելի աշխարհամարտ մը: Ծայրայեղ կուրութեամբ, կ'ըսենք, որովհետեւ՝ բայց Աստուած հեռու պահէ՝ եթէ երբեք նոր պատերազմ մը պայթի՝ այնքան է զօրութիւնը մերօրեայ զէնքերուն, որ բոլոր ժողովուրդները, պարտեալ թէ յաղթական, ուրիշ բան պիտի չչահին՝ բայց եթէ անապառ աւերած եւ աշխարհամած նախնիք:

Հետեւաբար կը հայցենք բոլորէն, մանաւանդ Ազգերու Ղեկավարներէն, որ լրջօրէն խորհրդածեն այս իրողութեանց վրայ Աստուծոյ՝ գերազոյն դատաւորին առջեւ, եւ յօժարաւամբ բանեցնեն ամէն հնարք ու միջոց՝ որ կ'առաջնորդէ անհրաժեշտ միութեան: Այս համերաշխ միութիւնը, որով՝ ինչպէս ըսինք՝ ժողովուրդներու հասարակաց բարօրութիւնը պիտի կարենայ ածիլ, ա՛յն ատեն միայն պիտի վերահաստատուի՝ երբ հոգիները խաղաղին, բոլորին իրաւունքները ապահովապէս պաշտպանուին եւ ամէնուրեք փայլի ու յարգուի ազատութիւնը Եկեղեցւոյ, ազգերու եւ քաղաքացիներու:

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Դարձեալ, ինչպէս ցեղերու եւ ազգերու միջեւ, նմանապէս ընկերային զանազան դասակարգերու միջեւ ալ անհրաժեշտ է հետզհետէ ստեղծել համերաշխ միութիւն: Եթէ ասիկա չիրագործուի, այն ժամանակ փոխադարձ ատելութիւնը եւ տարակարծութիւնն է որ պիտի տիրէ, ինչպէս արդէն կը նշմարուի. եւ ատկէ վրնան առաջ գալ խոռվութիւններ, աղիտարեր յեղափոխութիւններ եւ երբեմն նաեւ ջարդ ու կոտորած, որոնց հետեւանքով ծայր պիտի տայ հարստութեան հետզհետէ նուազումը եւ պիտի ստեղծուի տնտեսական տագնապ՝ ի վնաս հանրութեան եւ անհատներու: Վերոյիշեալ Մեր Նախորդը արդարօրէն կը մատնանշէր ասիկա ըսելով. « Աստուած ուղած է որ մարդկային ընկերութեան մէջ դասակարգերու անհաւասարութիւն մը ըլլայ, բայց միաժամանակ նաեւ սիրալիբ եւ արդարացի վերաբերում մը իրարու հանդէպ »⁵: Արդարեւ, « ինչպէս որ մարմինն մէջ զանազան անդամներ կը միաբանին եւ կը կազմեն այն ներդաշնակ ձուլումը որ կը կոչուի համաչափութիւն, նմանապէս բնութիւնը կը պահանջէ որ ընկերային կեանքին մէջ ... դասակարգեր իրարմով ամբողջանան, եւ իրարու հետ աշխատակցելով՝ ստեղծեն իրաւացի հաւասարակցութիւն մը: Ամէն դասակարգ պէտք ունի միւսին. զրամազուլուր չի կենար առանց աշխատանքի, եւ ոչ աշխատանքը՝ առանց զրամազուլուրի: Համերաշխութիւնն է որ կը կերտէ դեղեցկութիւնը եւ իրերու

ներդաշնակ կարգը»⁶։ Ուլ որ, ուրեմն, կը յանդգնի ուրանալ ընկերային դասակարգերու անհաւասարութիւնը, կ'ըմբոստանայ նոյն ինքն բնութեան օրէնքին դէմ։ Իսկ ով որ կը հակառակի ընկերային դասակարգերու այս փոխադարձ սիրալիր ու անհրաժեշտ աշխատակցութեան, անիկա անկասկած կը ձկտի խորտակելու եւ բաժան բաժան կտրտելու մարդկային ընկերութիւնը, մեծ խռովութիւն ու վնաս պատճառելով հասարակաց եւ անհատական բարիքին։ Ու Մեր նախորդներէն մէկ ուրիշը՝ Երջանկայիչատակ Պիոս ԺԲ. իմաստութեամբ կը նկատէր. « Ժողովուրդի մը մէջ՝ որ արժանի է այս անունին, բոլոր այն անհաւասարութիւնները որ վաճառական չեն, այլ առաջ կու գան իրերու ներքին բնութենէն, անհաւասարութիւններ՝ մշակոյթի, ինչքերու, քաղաքական դիրքի... բնաւ երբեք արդելք չեն համեղբայրական հարազատ զգացումներու զոյութեան »⁷։ Իւրաքանչիւր դասակարգ եւ ընկերային առէն մէկ համայնք կրնայ իր սեփական իրաւունքները պաշտպանել, կը բաւէ որ ատիկա կատարուի օրինաւորապէս, եւ ոչ թէ բռնութեամբ եւ վամ ոտնակոխ ընելով ուրիշներու իրաւունքները, որոնք նոյնպէս անբռնարարելի կը մնան։ Ամէնքը եղբայր են. հետեւարար բոլոր հարցերը պէտք է լուծուին բարեկամ մարար, փոխադարձ եղբայրական սիրով։

ԲԱՐԵԱՑԱԿԱՄՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐ ՆՇԱՆՆԵՐ

Պարտական ենք խոստովանիլ, եւ ասիկա ուրախալի է, որ ժամանակէ մը ի վեր, շատ տեղեր, ընկերային դասակարգերու միջեւ զոյացած փոխադարձ լարուածութիւնը հետզհետէ կը նուազի, ինչպէս արդէն կը նշմարէր Մեր անմիջական Նախորդը՝ խօսելով Գերմանիոյ վաթնորկէներուն. « Վերջին պատերազմի սոսկալի արհաւիրքէն, որ այնքան կատաղօրէն ցնցեց ձեզ, դոնէ այն բարիքը ծնաւ՝ որ ձեր ժողովուրդի վարդ մը խաւերուն մէջ, կանխակալ կարծիքներու եւ մենատիրական ձկտումներու դադարումով՝ դասակարգերու ընդդիմադիր հոսանքները հարթուեցան եւ մարդիկ աւելի իրարու մօտեցան։ Հասարակաց դժբախտութիւնը բոլորին համար թէպէտ դառն՝ բայց կենսաբեր ուսուցիչ մը եղաւ »⁸։

Իրաւանութեան մէջ, այսօր, շատ նուազած է դասակարգերու միջեւ զոյութիւն ունեցող հեռաւորութիւնը. անոնք չեն կրնար այլեւս վերածուիլ ընդդիմադիր ևրկու հատուածներու, հիմնուած մի միայն դրամատիրոջ եւ աշխատաւորի հանդամանքներուն վրայ. հետզհետէ կը նշմարուի ընկերակցութիւններու բաղմացում մը, եւ անոնց մէջ յարաճուն ընթացք մը, որով անոնք որ աշխատասիրութեամբ կամ ձեռնբեցութեամբ կը փայլին՝ կարող են բարձրանալ մինչեւ վերին աստիճանները ընկերութեան։ Իսկ զայնով բուն աշխատաւոր դասակարգին, միտիթարական է տեսնել այնտեղ ալ արդիական ձեռնարկները որոնք կը ձկտին բարեխաւի գործատուներու մէջ աշխատող գործաւորներու կենցաղը, որպէսզի մի միայն արդիւնաբերական եւ չահադիտական տեսանկիւնէն նկատի չառնուին անոնք, այլ բարձրագոյն տեսակէտով մը, որ մարդուս արժանաւայել կեանքն իսկ է։

ԱՆԴՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ու տակաւին երկար ճամբայ մը կայ կտրելիք։ Որովհետեւ դեռ շատ անհաւասարութիւններ կան, վիճարանութեան շատ չարժանիքներ վանձող, դանա-

զան հատուածներու մէջ, որոնք երբեմն սեփականութեան մասին անկատար եւ սխալ գաղափարներէ առաջ կու գան. եւ ասոր պատճառն է ոմանց մենատիրական ու անհատապաշտ ընթացքը։ Ասոր վրայ կ'աւելնայ անգործութեան տխուր երեւոյթը, որ շատերը կը տառապեցնէ մեծապէս. երեւոյթ մը որ առժամապէս թերեւս կրնայ աւելի եւս ծանրանալ՝ երբ նկատի առնենք մեքենականութեան նորօրինակ նուաճումները։ Այս էր որ կը նկատէր Մեր Երջանկայիչատակ Նախորդը Պիոս ԺԱ. երբ կ'ըսէր. « Անգործութեան մատնուած եւ ծայրագոյն կարծաւորութեան դատապարտուած կը տեսնենք այնքան պարկեշտ եւ յօժարակամ աշխատաւորներ, հանդերձ ընտանեօք, որոնք ուրիշ բանի կարօտ չեն՝ բայց եթէ համեստօրէն շահելու իրենց ճակտի քրտինքով, աստուածային պատուէրին համաձայն, հանապաղօրեայ հացը, զոր ամէն օր կը հայցեն Երկնաւոր Հօրմէն։ Իրենց աղաղակը կը յուզէ Մեր հայրական սիրտը եւ Մեզի կրկնել վու տայ կարեկցութեան միեւնոյն փափկանկատ շնչով այն խօսքերը՝ որ աստուածային Վարդապետին սրտէն բղխեցան ի տես անօթի ժողովուրդին. Գթամ ես ի վերայ ժողովրդեանդ » (Մրկ. Ը, 2)⁹։

Եթէ, ուրեմն, կը տեսնանք ու կ'անձկանք՝ եւ ամէնքը պէտք են տեսչալ ու հետամուտ ըլլալ՝ դասակարգերու միջեւ ցանկալի այդ ներդաշնակութիւնը ստեղծելու, հարկ է համաձուլելով հասարակաց եւ անհատական ճիշդերը եւ խրախուսելով քաջարի ձեռնարկները՝ լաւագոյն կերպով աշխատիլ որ ամէնքը, նաեւ ամենախոնարհ դասակարգի մարդիկ, կարենան աշխատանքով ու ճակտի քրտինքով հայթայթել ապրելու անհրաժեշտ այն պայմանները եւ ապահովել արդար եւ հաստատուն միջոցներով՝ իրենց եւ իրենցիններուն ապահովան։ Անտեսելու չենք որ մեր օրերուն կ'ընդհանրանան կեանքի շատ հանպաղան։ Անտեսելու չենք որ մեր օրերուն կ'ընդհանրանան կեանքի շատ հանպաղան։ Անտեսելու չենք որ մեր օրերուն կ'ընդհանրանան կեանքի շատ հանպաղան։

Ջերմօրէն կը յորդորենք, հետեւարար, դանոնք՝ որոնց վրայ կը ծանրանայ մեծագոյն պատասխանատուութիւնը, եւ որոնցմէ յաճախ կախում ունի բանուորներու վիճակը, որ նկատի չունենան մի միայն այն շահ որ բանուորը կրնայ իրենց հայթայթել, ու չբաւականանան միայն անոնց իրաւունքներուն պաշտպան կանգնելով՝ վճարմունքի խնդրին մէջ, այլ նաեւ դանոնք յարգեն իրենց մարդ, իրենց եղբայր։ Այնպէս վարուին, որ գործաւորները միշտ աւելի յարմար չափով մասնակցին կադմակերպութեան շահերուն, իրենք զիրենք օտար չզգան անոր հանդէպ, այլ անոր միտքին ու բարդաւաճման նախանձախնդիր։ Եւ այս յորդորը կու տանք այն նպատակով՝ որ տէրերու եւ աշխատաւորներու փոխադարձ իրաւունքներու եւ պարտքերու միջեւ միշտ աւելի սերտ մերձեցում մը ստեղծուի. հուսկ, որպէսզի այս ուղղութեամբ ստեղծուած պաշտօնական ընկերակցութիւնները չճառայեն միայն « իբր պաշտպանողական եւ յարձակողական դէնքեր, որոնք հակառակութիւն եւ վրէժխնդրութիւն կը յարուցանեն, եւ ոչ ալ դառնան յորձանք մը որ վը յորդի ու կը քանդէ », այլ ծառայեն իբր կամուրջ մը միացնող »¹⁰։ Յատկապէս ուշ դարձնել հարկ է այս հարցին, որպէսզի անտեսական մարդին մէջ կատարուած յաջողութեանց համեմատ՝ որու մասին խօսեցանք՝ ոչ նուազ յաջողութիւններով փայլի նաեւ բարոյական մարդը, ինչպէս որ կը պահանջէ քրիստոնէական արժանապատուութիւնը, մանաւանդ մարդկային ինքնին արժանապատուութիւնը։ Ի՞նչ օգուտ եթէ աշխատաւորը աւելի առատօրէն արդիւնաբերէ եւ ապրեն լակերպի լաւագոյն պայմաններ ստեղծուին, երբ անդին կ'անտեսուի վամ կը կորսուի զերագոյն բարիքը՝ որ անմահ հոգւոյն ժառանգութիւնն է։ Գաղա-

« Կարականը որու կը ձկտինք՝ այն ատեն միայն կընայ իրազեկութեամբ, երբ կաթողիկէ Եկեղեցւոյ ընկերաբանական վարդապետութիւնը լիով գործադրուի եւ բոլորը աշխատին ծաղկեցնել եւ արծարծել նաեւ ուրիշներու մէջ, մեծերուն եւ փոքրիկներուն մէջ, սէրը՝ առաքինութիւններու թաղուհին: Որովհետեւ ըզձալի փրկութիւնը պէտք է որ զլիսաւորաբար պտուղն ըլլայ սիրոյ յորդառատ զեղումի մը: քրիստոնէական այն սիրոյն, որ բովանդակ Աւետարանի համադրիչ օրէնքն է, եւ որ պատրաստ է միշտ ուրիշներու բարիքին համար զոհել ինքնինքը, որպէս զերազոյն հակաթոյնը՝ դարձու ամբարտաւան ու անասէր ընթացքին: այդ սիրոյն աստուածային գիմարիքը տուաւ Ս. Պողոս այս բառերով. « Սէր երկայնամիտ է, քաղցրանայ, ... ոչ խնդրէ զիւր... ամենայնի տեւէ... ամենայնի համբերէ » (Ա. Կորնթ. ԺԳ, 4-7)¹¹:

ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԷՋ

Հուսկ այս նոյն համերաշխութեան, որուն հրաւիրեցինք ժողովուրդները իրենց Պետերով եւ ընկերային դասակարգերով, կը հրաւիրենք հայրաբար նաեւ բոլոր ընտանիքները, որպէսզի փնտռեն զայն եւ ամբապնդեն: Եթէ արդարեւ չկայ համերաշխութիւն, խաղաղութիւն եւ միութիւն ընտանիքներու մէջ, ի՞նչպէս պիտի իրականանայ այդ՝ ընկերային կեանքին մէջ: Այդ ներդաշնակ ու կարգաւորեալ միութիւնը, որ պէտք է միշտ իշխէ ընտանեկան յարկէն ներս, կը ծնի նոյն ինքն քրիստոնէական ամուսնութեան անլուծելի զօղէն եւ անոր իւրաքանչեւ սրբութենէն, ու կը նպաստէ մեծապէս բովանդակ ընկերութեան կարգաւորութեան, բարդաւաճման եւ բարօրութեան:

Հայրը, զլուսն ընտանիքին, իրեններուն մէջ թող Աստուծոյ ներկայացուցիչն ըլլայ, եւ տիրէ միւսներուն վրայ ո՛չ միայն իշխանութեամբ, այլ փայլի օրինակելի կենցաղավարութեամբ: Մայրը, լի սրտի գործով եւ ընտանեկան առաքինութիւններով, առաջնորդն ըլլայ իր զաւակներուն՝ անոյժ բայց նաեւ անտեղիտալի կեցուածքով: Իր ամուսնին հանդէպ սիրալիր ու քաղցր վարմունք ունենայ. ու միասին խնամքով կրթեն ու դաստիարակեն իրենց զաւակները - Աստուծոյ կողմէ ամենաթանկազին նուէրը - ուղիղ եւ քրիստոնէական վայել կեանք մը ապրելու: Իսկ զաւակները միշտ հնազանդ ըլլան ծնողներուն, ինչպէս որ պէտք է, եւ սիրեն զանոնք: ոչ միայն միութարութիւն ըլլան առնոց, այլ նաեւ՝ ի հարկին՝ օգնեն: Ընտանեկան որմերէն ներս թող տիրէ այն սէրը՝ որով ծաղկած էր Նադարեթի ընտանիքը: Թող բողբոջին այնտեղ քրիստոնէական բոլոր առաքինութիւնները, տիրէ հոգիներու միութիւնը եւ փայլի պարկեշտ կեանքի օրինակը: Ո՛հ, չըլլա՛յ թէ - եւ ասոր համար կ'աղօթենք առ Աստուած եռանդազին - խանդարուի ընտանեկան կեանքի ա՛յլքան զեղեցիկ, ա՛յլքան անուշիկ եւ այսքան անհրաժեշտ համերաշխութիւնը: Եթէ խախտի ընտանեկան կեանքի քրիստոնէական այս նկարագիրը, եթէ աստուածային Փրկչին պատուէրները մերժուին ու անտեսուին այս կէտին մէջ, այն ատեն կը խախտի ինքնին հիմը ընկերային կեանքի, որուն ծանր վտանգ մը կը սպառնայ, մեծ վնաս պատճառելով բոլոր քաղաքացիներուն:

Գ.

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ

ՅՈՒՍԱԼԻՐ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐ

Այժմ կարգն է խօսելու այն միութեան մասին՝ որ առանձնապատուկ վերապալ ցանկալի է Մեղի, եւ որ սերտ առնչութիւն ունի այն հովուական պաշտօնին հետ՝ որ Մեղի յանձնած է Աստուած. խօսինք ուրեմն Եկեղեցւոյ միութեան մասին:

Ամէնուն ծանօթ է որ աստուածային Փրկիչը հիմնած է այնպիսի ընկերութիւն մը, որու միութիւնը՝ իր խօսքերուն համաձայն՝ պիտի տեւէ մինչեւ աշխարհիս վախճանը. « Ահաւասիկ ես ընդ ձեզ եմ դամենայն աւուրս՝ մինչեւ ի կատարած աշխարհի » (Մտթ. ԻԸ, 20). Եւ այս նպատակով է որ եռանդուն աղօթք մը բարձրացուց իր երկնաւոր Հօր: Յիրաւի այդ աղօթքը, որ մեծաբանքի իր զղացումներուն համար՝ անտարակոյս ընդունելի եւ լսելի եղաւ (Հմմտ. Եբր. Ե, 7), « Զի ամենքին մի իցեն, որպէս դու Հայր՝ յիս, եւ ես ի քեզ, զի եւ նոքա ի մեզ իցեն » (Յով. ԺԷ, 21), այս աղօթքը, կը կրկնենք, քաղցր յոյսը կը ներշնչէ Մեղի թէ վերջապէս բոլոր ոչխարներն ալ՝ որ այս փարախէն չեն՝ պիտի բաղձան վերադառնալ հոն, որպէսզի նոյն աստուածային Փրկչին պատգամին համաձայն՝ « Եղիցին մի հօտ եւ մի հովիւ » (Յովհ. ԺԺ, 16):

Այս աներկբայ վստահութիւնը բուռն կերպով մղեց Մեղ համօրէն աշխարհի յայտարարելու Տիեզերական Ժողովի մը գումարման Մեր մտադրութիւնը, որուն պիտի մասնակցին Հողեւոր Առաջնորդներ, ամէն կողմէ, բանակցելու համար կրօնական ծանր հարցերու մասին, ու մասնաւորապէս ի նրապատ կաթողիկէ Եկեղեցւոյ աճման, քրիստոնէական բարքերու ստույգ վերանորոգման եւ եկեղեցական օրէնքներու արդիացման՝ մերօրեայ պահանջներուն համաձայն: Եւ ասիկա սքանչելի ապացոյցը պիտի ըլլայ ճշմարտութեան, միութեան եւ սիրոյ, զոր տեսնելով նաեւ անոնք՝ որ հեռացած են Առաքելական այս Աթոռէն՝ իրենք ալ պիտի հրաւիրուին որոնելու եւ գտնելու այն միութիւնը, զոր Յիսուս Քրիստոս իր երկնաւոր Հօրմէն թախանձազին աղօթքով հայցեց:

ՄԻՈՒԹԵԱՆ ՃԻԳԵՐ

Որոշակի գիտենք, եւ ասիկա Մեղի մեծ միութարութիւն է, որ այս վերջին ժամանակաշրջանիս, Ս. Պետրոսի Առաքելական Գահէն անջատուած կարգ մը համայնքներու մէջ ալ համակրանք ստեղծուած է կաթողիկէ հաւատքին եւ կաղմակերպութեանց նկատմամբ, ինչպէս նաեւ յարաձուն դնահատանք մը՝ Առաքելական այս Գահէն հանդէպ, մինչ ճշմարտութեան հետապնդումը հետզհետէ կը փարատէ նախապաշարումները: Գիտենք նաեւ թէ կան ալ, որ թէեւ Մեղմէ եւ իրարու մէջ իսկ բաժնուած, բայց քրիստոնէայ անունով ճանցըւած, փոխադարձ ջերմ յարաբերութիւններ մշակելու նպատակով՝ համազուամարներ սարքած են, եւ այդ նպատակին ծառայող կաղմակերպիչ Մարմիններ եւս հաստատուած: Այս բոլորը կը մատնանշեն թէ անոնք ալ բուռն անձուկն ունին տեսակ մը միութիւն ստեղծելու:

գործունեայ անդորրութիւն մըն է, ոչ թէ յոյլ եւ անդործ. ու զլիաւորապէս անդորրութիւն մըն է պատերազմող ընդդէմ ամէն տեսակ մոլորութեան, որ յաճախ ճշմարտութեան պատրիշ ու նենդ հանդերձին տակ իւր ծածկուի. անդորրութիւն մը պայքարող ընդդէմ ախտալարակ հրապոյրներու, ընդդէմ ամէն տեսակ հոգեկան թշնամիներու՝ որոնք կը ճղնին արատաւորել ու քանդել անմեղութիւնն ու մեր կաթողիկէ հաւաքը. մաքառող ընդդէմ ատելութեան, վէճերու, հակառակութիւններու, որ կրնան այդ հաւատքը բեկանել ու յօշոտել: Այս պատճառով է որ աստուածային Փրկիչը ի՛ր իսկ խաղաղութիւնը մեզի թողուց ու յանձնեց:

Սաղաղութիւնը, հետեւաբար, որուն հարկ է դիմենք եւ անպատճառ հասնինք՝ պէտք է ըլլայ այն խաղաղութիւնը, որ — ինչպէս ըսինք — ոչ մէկ մոլորութեան չի հաւանիր, եւ այդ մոլորութեանց հետեւողներուն հետ չի գործակցիր, ախտերու չի հակիր, եւ որ ամէն տեսակ տարաձայնութենէ իւր խուսէ: Այս է խաղաղութիւնը, որուն հետեւորդները հարկ է պատրաստ ըլլան անձնական դիւրութիւններէ ու շահերէ իսկ հրաժարելու՝ ի սէր ճշմարտութեան եւ արդարութեան, հետեւելով Աւետարանին. «Սնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ եւ դարդարութիւն նորա» (Մատ. 2, 33):

Աստուածածին Կոյսը, թաղուհին խաղաղութեան, որու Անարատ Սրտին նուիրուած է համայն մարդկութիւնը՝ Մեր Երջանկայիշատակ Նախորդին Պիոս ԺԲ. Քահանայապետի կողմէ, թող ինքն ալ հայցէ Աստուծոյ — իւր խնդրենք թախանձադին — այս համերաշխ միութիւնը, ճշմարիտ խաղաղութիւնը, գործունեայ ու զինուորեալ խաղաղութիւնը, թէ՛ անոնց համար որ մեր որդեակներն են ի Քրիստոս, եւ թէ՛ ամէն անոնց՝ որ թէեւ բաժնուած՝ սակայն չեն կրնար չտեսնչալ ճշմարտութեան, միութեան եւ համերաշխութեան:

1. Epist. «Saepenumero considerantes», A. L. III, 1883, 262. — 2. Epist. «Exeunte iam anno», A. L. III, 1888, 396. — 3. Enc. «Humanum genus», A. L. IV, 1884, 53. — 4. Epist. «Praelara gratulationis», A. L. XIV, 1894, 210. — 5. Epist. «Permoti Nos», A. L. XV, 1895, 259. — 6. Enc. «Rerum novarum», A. L. XI, 1891, 109. — 7. Radiomessaggio Natalizio 1944; Discorsi e radiomessaggi di S. S. Pio XII, vol. VI, 239. — 8. Radiomessaggio al 730 Congresso dei cattolici Tedeschi; Discorsi e radiomessaggi di S. S. Pio XII, vol. XI, 189. — 9. A. A. S. XXII (1931), 393-394. — 10. Per un solido ordine sociale; Discorsi e radiomessaggi di S. S. Pio XII, vol. VII, 350. — 11. Epist. «Inter graves», A. L. XI, 143-144. — 12. Enc. «Mortalium omnes», A. A. S. XX (1928), 5 sq. — 13. J. H. Newman, Difficulties of Anglicans, vol. I, lect X, p. 261 sq. — 14. Epist. XLIII, 5; Corp. Vind. III, 2, 594. Cfr. Epist. XL, Migne PL. IV, 345. — 15. Hom. in mysticam caenam, PG. LXXVII, 1027. — 16. In Ps. 32, Enarr. II, 29; Migne PL. XXXVI, 299. — 17. In Ps. 82, Enarr. II, 14; Migne PL. XXXVII, 1140.

ԾԱՆՈԹ. ԽՄԲ. — Այս շրջաբերականը տակաւին ունի Զորքող մաս մը, որ Սրբ. Քահանայապետը կու տայ զանազան կարեւոր յորդորներ, ուղղութիւնով եպիսկոպոսներուն, քահանաներուն, կրօնաւորներուն, միանձնուհիներուն եւ աշխարհական դասակարգի զանազան խմբերուն: Պատշաճ համարեցանք այդ մասը վերապահել առանձին հատորիկին՝ որով լոյս պիտի տեսնէ սոյն կոնգակը իր ամբողջութեամբ:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ ԵՒ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

(Շար. տե՛ս «Բազմավեպ», 1959, թ. 1-2, էջ 9)

Յ. ՄԱՆԱՆԴԵԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ

Մանանդեան յատուկ կերպով Հայոց քրիստոնէութեան դարձի պատմութիւնը դրած է, սակայն իր քաղաքական պատմութեան ընթացքին՝ մանրազնին կերպով ուսումնասիրած է Տրդատ Բ.էն մինչեւ Տրդատ Գ.ի շրջանը, որ մեր հարցին ամբողջական լուսարանութեան համար շատ կարեւոր է: Բայց ինչ որ ուղղակի Տրդատ Գ.ի թաղաւորութեան սկզբնաւորութեան եւ Հայոց քրիստոնէութեան դարձի թուականին կը վերաբերի՝ արդիւնք է նախորդ շրջանի նոր ուսումնասիրութեան. ասկից՝ իր հանած եղբակացութիւնն ալ բոլորովին նոր է: Իր կարծիքը այս մասին հիմնուած է զլիաւորաբար Սեբէոսի վերադրուած պատմութեան Գ. զուգահեռ եռանուն ցանկին վկայութեան վրայ, որուն համաձայն՝ Սոսրով Քաջ սպաննուած է «Ի չորրորդ ամին Դիոկղետիանոսի». իսկ Տրդատ, անոր որդին, թաղաւոր եղած է «Ի հնգետասներորդ ամի Դիոկղետիանոսի» որ է 298ին: Եւ ընդունելով Սորենացիի վկայութիւնը Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան համար՝ թէ «Յեւթնետասներորդ ամի Տրդատայ գտաք նստեալ յաթոռ սրբոյ Առաքելոյն Թաղէոսի զնախահայրն մեր Գրիգորիոս», կ'ունենանք 315 տարին իբր Գրիգորի ձեռնադրութեան կամ Հայոց դարձին թուական: Մանանդեան այն կարծիքէն է որ Տրդատ քրիստոնէութիւնը ընդունած ըլլայ 313ի Միլանի վճիռէն վերջ, որով հռոմէական կայսրութեան մէջ քրիստոնէութիւնը թոյլատրուած կրօնք կը ճանչցուէր. վասնզի,

կը խորհրդածէ պատմադէտը, Հայաստան տերտորէն կապուած ըլլալով հռոմէական կայսրութեան՝ ենթակայ էր անոր ազդեցութեան նկատմամբ քրիստոնէութեան դէմ եղած հալածանքներուն կամ թոյլտուութեան³⁷:

Ինչպէս նախորդ կարծիքներուն համար, հոս ալ Հայոց քրիստոնէութեան դարձի թուականը կախում ունի Տրդատի թաղաւորութեան սկիզբի թուականէն: Եւ որովհետեւ Մանանդեանի ընդունած թուականը՝ 298, թէեւ հաստատուած Սեբէոսի վերադրուած պատմութեան վկայութեամբ, բայց ընդհանրացած կարծիքներէն շատ տարբեր ըլլալուն, հարկ է աւելի մանրամասնօրէն մէջբերել անոր ուսումնասիրութեան կարեւոր եղբակացութիւնները, որ Գ. դարու Հայոց պատմութեան կը վերաբերին:

Մանանդեանի կարեւոր նկատողութիւններէն մէկն է թէ Արշակունի հարստութեան հիմնադիրը Տիրիթ Ա. է, ինչպէս սովորաբար կը համարուի: Ան եղած է պարզապէս առաջին Արշակունի հայ թագաւորը, որուն հետեւած են ուրիշներ, ինչպէս են Սանատրուկ (75-110), Աշխադար (110-113), Պարթամասիր (113), Վաղարշ Ա. (117-140), Բակուր (161-163), որոնք իրարու յաջորդած են ո՛չ թէ պայազատութեան սկզբունքով, այլ Պարթեւաց թաղաւորին որոշողութեամբ եւ Հռոմի յայտնի կամ լուրջայն հաւանութեամբ:

37. Մանանդեան, ՔՅՈՒԱՄ տեսութիւն հայ մոլորի պատմութեան, Երեւան, 1957, հատ. Բ, էջ 127:

